Արձանագրություն N3
ՀՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-07/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք. Արմավիր
Շահումյան 3

04.11.2025թ.
ժամը 11^{00}

Նիստին մասնակցում էին՝
Նախագահ՝ Վարդան Գասպարյան
Անդամներ՝ Մարգարիտ Հունոյան
Քարտուղար՝ Մերի Բարեղամյան
Նիստից բացակայում էր Հասմիկ Միրզոյանը:

1. Ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերում հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու մասին

Վարդան Գասպարյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել էր:

Քարտուղարը (գնումների համակարգողը) էլեկտրոնային աճուրդի իրականացման համակարգով ծանուցել է **«Նատալի ֆարմ» ՍՊԸ, «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «Խաչպար» ՍՊԸ, «Կվանտա» ՍՊԸ, «Ռիտա Գասպարյան» ԱՁ և «Լևոն և Լամարա» ՍՊԸ** մասնակիցներին հայտում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

«Նատալի ֆարմ» ՍՊԸ, «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «Խաչպար» ՍՊԸ, «Կվանտա» ՍՊԸ, «Ռիտա Գասպարյան» ԱՁ և **«Լևոն և Լամարա» ՍՊԸ** մասնակիցները սահմանված ժամկետում կատարել են շտկումները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Հայտերի ուսումնասիրության նպատակով նիստը կասեցնելու մասին

Վարդան Գասպարյան

Մասնակիցների ներկայացրած շտկումները ուսումնասիրելու համար նիստը կասեցնել՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի պահանջները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 2, դեմ՝ 0:

18.11.2025թ. ժամը 12^{00} նիստը վերսկսվում է.
Հասմիկ Միրզոյանը մասնակցում էր նիստին:

3. Շտկված հայտերի հրավերով սահմանված պահանջների համապատասխանության մասին

Վարդան Գասպարյան

«Նատալի ֆարմ» ՍՊԸ, «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «Խաչպար» ՍՊԸ, «Կվանտա» ՍՊԸ, «Լևոն և Լամարա» ՍՊԸ մասնակիցների շտկումները համապատասխանում են հրավերի պահանջներին, հայտերի ոչ գնային պայմանները գնահատվում են բավարար:

«Ռիտա Գասպարյան ԱՁ» մասնակցի հայտի ոչ գնային **պայմանները 9, 12, 22, 23, 25, 26, 28, 29, 31, 57, 70** չափաբաժինների մասով գնահատվում են բավարար, իսկ **6, 19, 20, 27** չափաբաժինների մասով գնահատվում են անբավարար, շտկումները չեն համապատասպանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ընթացակարգի ամփոփման մասին

Վարդան Գասպարյան

4.1 Հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ընտրված մասնակից են ճանաչվում.

- չափաբաժին 42,43,44,46,50,51,71,89 - «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 35,55 - «Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 2,4,15,16,17,18,47,69 - «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 41,45,78,79 - «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ն
- չափաբաժին 5,7,8,10,11,13,14,21 - «Խաչպար» ՍՊԸ,
- չափաբաժին 30,33,37,38,77- «Երմեդ» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 58,59 - «ԷՄՀԱՐ» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 54,72,76,86 - «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 68,74 - «Ս.Ա.Վ. գրուպ» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 34,48,49,83 - «Կվանտա» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 80,81,82 - «Տիգրան Ստեփանյան» ԱՁ-ն,
- չափաբաժին 1 - «ՏԵԽՆՈ-Մ» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 9,12,22,23,25,26,28,29,31,57,70 - «Ռիտա Գասպարյան» ԱՁ-ն:

4.2 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 32, 36, 52, 53, 56, 65, 84, 85, 87 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ մասնակիցների գնառաջարկները գերազանցում են գնման հայտով սահմանված գները:

4.3 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի 3, 60, 63, 75, 88 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

4.4 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 24, 39, 40, 61, 62, 64, 66, 67, 73 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ մասնակիցների կողմից ներկայացվել են հավասար նվազագույն գնային առաջարկներ:

4.5 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 6, 19, 20, 27 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

4.6 ՀՀ «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վարդան Գասպարյան**

Անդամներ՝ **Մարգարիտ Հունոյան**

Հասմիկ Միրզոյան

Քարտուղար՝ **Մերի Բարեղամյան**